

Ես Յովհաննէս անարժան,
 Եւք քահանայ զործովս ունայն:
 Նըւիրկիրուն օր կատարման,
 Սակաւ բաներս որ զրկցան,
 Ո՛ր որ տակ զհայր Բեղայն,
 Յիշեալ լիցի յարքայութեանս
 Եյս զործեցաւ 'ի մեծ թվական,
 Ինըն հարիւր թիւն էր լըման,
 ԿՆ. թիւ յաւելիան,
 Հոկտեմբերի եօթնւտասեան:

Ջձեղ ազաչեմ զամենեսեան, ով ընթերցողք տեարք սրբազան, Թաղսիրութիւն՝ շանէք. Երարիչն Եստուած օրհնէ զձեղ. անմեղազիր լերուք, զի կար մեր այս էր:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Հ Ո Ք Ե Ի Ո Ր Գ Պ Ր Ո Յ

Հ Ա Ռ Ի Ճ Ո Յ Վ Ա Ն Ո Ւ Յ

Ի Շ Ի Ր Ա Կ

Եթէ իւրաքանչիւր մտածող եւ բարեմիտ Հային ցանկալի է իւր ազգի մանկտեաց ապագայ բարօրութիւնը, եթէ նրանցից մի քանիսի եւ մանաւանդ մեր Հոգեւոր Ծայրագոյն իշխանութեան յատուկ փափագն է եղած այդ բարօրութեան իսկական տարրը մտցընելու համար ուսումնարաններ ունենալ, եւ եթէ այդ զովիկի իղձերու եւ ցանկութեանց կարեւոր յաջողութիւնը օրինաւորելու համար շատ ձեռքերի արդիւնաւոր կարկառմանը զգայուել է կարօտութիւն, ուրիմն Հառիճոյ մենաստանը եւ անդ դանուած Հոգեւոր դպրոցը մասամբ մի մեր ժողովրդի ձգտմանը եւ կարեաց արդիւնաւոր ծառայութիւն ցոյց տուած է: — Այս հռչակուոր մենաստանի նախնի եւ արդեան վիճակներու մասին մանրապատում տեսութեամբ մի ընթերցասիրաց հետաքրքրական կարօտութիւնը բառնալու պարտքը կը թողնուի ժամանակի խնամքը,

այժմս անձեռնահա լինելու պատճառաւ. միայն այսրանս ասելու անհրաժեշտ պարտք կը համարիմ, որ նոյն մենաստանի մահամերձ դրութեանը օժանդակելու ասպարէզ երաւ սրանից քսան տարի յառաջ քսանի մի Աղէքսանդրապօլցի երիտասարդաց խումբ, եւ ընկերական ճշմարիտ սիրով կապուած իւրեանց հանդանակեալ դրամական եւ այլ նիւթական զոհագործութիւններով շուրջ եւ կենդանացուցիչ պատկերը վերադարձրին իրան: Այսպէս բոլոր վտանգը վանքից հեռացնելուց յետոյ այդ անձնանուէր ընկերութիւնը օւսման ճաշակը առած լինելով, ահա համարեան երեքտասաներորդ տարի է որ հիմնած է այնտեղ ուսումնարան եւ հետեւաբար նրա հետ կից մի հոյակապ ննջարան աշակերտաց համար նրա մէջ արժանաւոր եկեղեցականք պատրաստելոյ նպատակաւ, իւրաքանչիւր տարի հողալով ուսումնարանի բոլոր պիտոյքը: Այս նպատակի ամենակարեւորութիւնը եւ մեր այժմեան դրութեան մեծ յարմարութիւն ունենալը յուսամ որ իւրաքանչիւր բարեմիտ Հայ խոստովանի: Բայց արեւս որ փոքրահօտ ընկերութեան բարեկատակ ձգտմանց եւ ձեռնարկութեանց օժանդակութիւն ցոյց տալոյն անտեղի հրաժեշտներ կը վալելէր մեր նորակառոյց հոգեւոր Գպրոցը ո՛չ միայն ուսման ճաշակն չառնող մի հասարակութեան կողմից, այլ եւ հոգեւոր իշխանութեան եւ նոյն վանքում զրօնուած քանի մի անբարեմիտ պաշտօնեաների կողմից շինել եւ քանդել, կարգադրել եւ խանգարել, խրախուսել եւ հարածել, ողորմելի աշակերտաց: այս էր ահա մի ժամանակեայ ընկերութեան եւ վանահօր փոխադարձական սխրագործութեան ցաւալի պատկերը. թողում ասել եւ այլ այն յարգելի խոչնդոտներն, որոնք անակնունելի խոչնդոտներու հետ ի միասին թեւ թեւի տուած բարեպաշտօն ընկերութեան առաջն էին դալիս իւրաքանչիւր օր եւ իւրաքանչիւր տարի. որով նոցա ամենայն մէկ բարի եւ ձորղիւնաւոր գործառնութիւնը առ ժամանակեայ դադարումս եւ ստանութիւն կը ստանար: Այս ամէն խոչնդոտներուն եւ անտեղի վշտաց դէմ հսկայաբար կը դիմանար Հառիճոյ ընկերութիւնը եւ միշտ կը յուսար որ երբ եւ իցէ իւր Գպրոցի բաղան էլ կը փայլի ողորմութեամբն Աստուծոյ. անհետքացան այն ցաւալի միջոցները ժամանակի անյատակ եւ անդառնալի հեղեղների մէջ, եւ ընկերութեան նորարողոց ուսումնարանը շնորհիւ իւր բարեպաշտօն հիմնադրաց տոկալով այն ամէն մրրիկների ուժին, կարողացաւ մի քանի տրժամաւոր պատուղներ շնորհել իւր սաներուց. սրանցից մի քսանիսն կը շարունակեն գեղերի մէջ արժանաւոր սրբազնագործութեան պաշտօնն լրացնելով ըստ ամենայնի

4) Պ-ի-...-է-ն:

իրենանց խնայական պարտքը իրեն հուսատարիմ ծառայ ազդի եւ եկեղեցւոյ եւ մի քանիսն առանց այդ կոչման, ուսուցչական պարտաւորութիւն կը կրեն նոյնպէս զիւզերի մէջ ուր որ աւելի կարօտութիւն կը զգացուի: Եւ ի քանի տարի յառաջ վանահօր կողմից ունեցած խնայողուններն բառնալու եւ նրանց էլ իրանց գործակից անելու համար ծայրագոյն իշխանութեան բարեհաճութեամբ ընկերութիւնը ստացաւ իրաւունք միտցնել ուսումնարանի եւ վանուց վարչութիւնները իրանց եւ վանահօր թեւի տակ, եւ այնպէս հոգալ փոխադարձաբար նոցա, այսինքն վանքի եւ Գրպրոցի պիտոյքը: Այնուհետեւ ընկերութիւնը կը յուսար երկուտեք պաշտպանութիւն ունենալ թէ հասարակութեան եւ թէ իշխանութեան կողմից, եւ փառք Աստուծոյ մինչ մեր նախահայրապետի զահր ընկալաւ Վեհաստիճան Գէորդ Գ. Աստուածընտիր Կաթողիկոսը, կարծես մի նոր կենդանութեան նշան ստացաւ ոչ միայն Հառիճոյ Հոգեւոր Գպրոցը, այլ եւ ամեն մէկ հալածեալ ազգային Գպրոց: Կէ կարելի ուրանալ արդարեւ, որ Գէորդ Վեհափառի Հայրապետութիւնը պիտի անմահանայ այս Գպրոցների բարեկարգութեամբ եւ առհասարակ մեր թմբած ժողովուրդին մի արժնացողիչ շարժում տալով կը յուսայ Հառիճոյ ընկերութիւնն էլ, որ պիտի վերակենդանանայ իւր գպրոցը եւ պիտի մխիթարէ ոչ միայն իւր սիրտը, այլ եւ բոլոր մերահնէքց, թէ ստանայ իշխանական պաշտպանութիւն Ծայրագոյն Հայրապետի եւ այլոց իշխանաւորաց կողմից: Արդիտեսեւ Վեհափառ Հայրապետն արդէն ուշադրութիւն դարձրած է վանական գպրոցներն բարեկարգելու եւ մանաւանդ Հառիճոյն, ինչպէս այս տարի օգոստոսիսութեան պատճառաւ այցելութեան շնորհ սփռելով ժամանակն անմամբ քաջակերեց ընկերութիւնն եւ Հայրապետական Սուրբ օրհնութեամբ սրտապնդելով նոցա յուսաբեկեալ, դրութիւնը ծայրագոյն պատուիրեց ի միջի այլոց առանձին ուշադրութիւն դարձնել ուսումնարանի յառաջադիմութեան համար, եւ որովհետեւ Նորին Սրբազնասուրբ օծութեան յատուկ ցանկութիւնն է արժանաւոր եկեղեցականք պատրաստել տալ այդ Գպրոցներում, վասնորոյ բարեպաշտօն ընկերութեան վազմանի նպատակն Վեհափառի վսեմ նպատակին շատ մօտիկ կը համարուի եւ բոլորովին նման է, ուստի սխալուած չէ եղած նա, Վեհափառ Հօր եւ հետեւաբար նորա հօտի ցանկութեան եւ ժողովանց համաձայն արդէն հոյակապ Գպրոց մի իւր ննջարաններով եւ ամենայն պարագայիւր առանձին կանոնադրութիւններով եւ պատճառութեամբ պատրաստած լինելով, կը մնայ որ Աբրահամայ բարե-

հուշակ Խմբագրութիւնը բարեհաճի յայտնել ցանկացող համազգայնոց Հառիճոյ Գպրոցական վարչութեան կողմից աշակերտ ընդունելու համար հետեւեալ պայմաններն: Առաջին), Հառիճոյ Հոգեւոր Գպրոցը միտնելու ցանկացողներն պարտական են լցուցանել մի առ մի Վանական Գպրոցաց ընդհանուր կանոնադրութեան բոլոր պայմանները: Երկրորդ), նորա պարտական են լցուցանել Հառիճոյ Հոգեւոր Գպրոցի կանոնադրութեան պայմաններն եւս, որոնք ըստ մեծի մասին համաձայն են ընդհանուր կանոնաց եւ սահմանուած տեղի հանդամանաց յարմարութեան համար: Երրորդ), նորա պարտական են մնալու այն Գպրոցում ամբողջ տարի եւ հետեւաբար մինչցաւարտ ուսման. նորա կարող են երկամսեայ կամ մի ամսեայ արժակուրդ ստանալ առանձին հրամանաւ հոգաբարձուաց եւ վերատեսչի Գպրոցին, իւրեանց հայրենիք այցելու. միւս միջոցներում ճնօղը չունին իրաւունք առանց յարդի պատճառի հեռացնել իւրեանց գաւակաց Գպրոցից մինչ ցաւարտ ուսման. եւ Չորրորդ), նորա բոլորերին պարտական են լինել զիւզերութիւ համաձայն ընդհանուր կանոնադրութեան Վանական Գպրոցաց, եւ չը բնակիլ զիւզականաց տներում. եւ իւրեանց բոլոր պիտոյից համար բաց ի հանդերձեղէնէն, պիտի վճարեն վանիցումսական երկու ռուբլի, իւրաքանչիւր ~~արեւելիկ~~ կանխիկ: Իսկ հանդերձեղէնն իրենք պարտական են հոգալու համաձայն որոշման ընդհանուր կանոնադրութեան Վանական Գպրոցաց:

Հառիճոյ ընկերութիւնը վստահ է իւր համազգայնոց վրայ որ նորա արդէն զգալով ուսման կարեւորութիւնը, Վեհափառ Հօր եւ ընկերութեան վազմանի ծղամանց օժանդակելու պարտքը կը ճանաչեն իրեն անդամք ամբողջ մարմնոյն Հայ Ազգութեան: Արեւմտեւ Արագածայ ստորոտում բաղձած զշիտյածեւ Հառիճն էլ պիտի պայծառանայ իւր արդիւնաւոր բուրաստանով. որ շիրակայ պտղաբեր հողի եւ կենդանաբար ջրերի մէջ հիմնուած Հոգեւոր եւ մարմնաւոր բարիք կը մատակարարէ ուսումնածարաւ շինական դասու ազգատիկ մանկանց, եւ ունի ոչ սակաւ կենդանի պտուղներ եւ որոնք տքնում են անդադար մեր թշուառիկ ժողովրդի օգտի համար, եւ բարենպաստակ ընկերութեան ճնչին սերմն արդիւնաւորելով նրան եւ բոլոր բարեախրայ մեծ մխիթարութիւն կը պատճառեն:

* * *